Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

# ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ~~

**Հոդված 1.** «Արժեթղթերի շուկայի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների~~տվյալների~~ տրամադրումը, ինչպես նաև բաժնետոմսերի և ~~դրանց սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած տեղեկատվության տրամադրումը~~ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության տրամադրումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկ~~ատվ~~ություններ~~ի~~~~ան~~, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ սույն օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկություններ~~ատվության~~ տրամադրումը.»:

2) 2-րդ մասի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.~~։~~

3) Լրացնել նոր՝ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների ~~ատվության~~ տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունները

~~ատվությունը~~ տրամադրում են տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգին հասանելիություն տալու միջոցով, իսկ այդպիսի համակարգ չմուտքագրված տեղեկությունների ~~ատվության~~ դեպքում՝ համապատասխան մարմնից ստացված հարցմանը գրավոր պատասխան ներկայացնելու միջոցով: Տեղեկություններըատվությունը տրամադրվում են~~է~~ անվճար, բացառությամբ թղթային ձևով տրամադրված տեղեկությունների~~ատվության~~, որի համար հատուցման կարգը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

**Հոդված 2.** Օրենքի 197-րդ ~~հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով.~~հոդվածում լրացնել նոր՝ 13-րդ մաս.

«13. Սույն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված անձանց կողմից՝ Հայաստանյան կամ Օտարերկրյա անվանատերերի մոտ առկա տեղեկությունների վերաբերյալ հարցումների դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիան ~~սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով~~ սույն հոդվածում սահմանված ժամկետներում և կարգով դիմում է անվանատերերին և դիմումի հիման վրա ստացված տեղեկությունները փոխանցում է հարցումն իրականացնող մարմնին:»:

**Հոդված 3.** Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող օրը:

2. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվում է մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը: